ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԻՏԵՐ ՔԱՌԻԻ

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑՈՒ ՍԻՐԱԾ ԷԱԿԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռամեալ սիրով սիրտ իմ ցընծայ,
Հեռաստանէ առ քեզ խայտեայ,
Եւ ողջունեալ քեզ համբոյր տայ,
Սիրով ի սէռ քո կապեցայ . . .

Նուաղեալ սիրտ իմ յոյժ տոչորի,
Խանդաղակաթ առ քեզ լինի,
Սիրով կապեալ ընդ քեզ կապի
'Էայլ ի քեզնէ բաժանի[1]:

Ոհ, թէ այն պահն, որ զքեզ տեսնէի,
Ձաջդ տիրաշօշափ ես համբուրէի,
Ժամ մի դէմ երեսիդ աչօք հայէի,
Ապա զհոգիս մարմնոյս իմ աւանդէի[2]:

Սերը, մարդկային այդ ամենասուրբ զգացումը հայ միջնադարյան քնարերգության հիմնական եւ գլխավոր նյութն է: Եւ Գրիգորիս Աղթամարցու դերն այդ ասպարեզում միշտ մեծ է եղել եւ զգալի ազդեցություն է թողել հաջորդ սիրերգակների վրա: Հետեւաբար, հետազոտողների աշխատություններում նշանակալի տեղ է զբաղեցնում նրա անունով հայտնի ստեղծագործությունների գեղարվեստական քննարկումը: Իսկ նորագույն շրջանի մասին կխոսենք հետո՝ մանրամասնորեն: Այժմ սակայն ցանկանում եմ ընթերցողի ուշադրությունը հրավիրել մի նոր փաստի վրա, որ հայտնաբերել է հանգուցյալ հայագետ Ս. Մնացականյանը[3]: Խոսքը սիրերգերի անդրանիկ ժողովածուի մասին է: Ինչպես արդեն հայտնի է, դրանում տեղ գտած բանաստեղծությունները բաժանվում են երեք խմբի, որոնցից առաջինը բացառապես

1 **Ն. Ակինեան**, Զաքարիա եպս. Գնունեաց եւ իւր տաղերը, Վիեննա, 1910, էջ 44, տող 20-23 եւ էջ 45, տող 36-39:

2 Այդ տողերը գրել է Հակոբ Թոքաթեցին ի պատիվ իր ուսուցիչ Հակոբ Այվաթեցու 1612-14 թվականներին. տե՛ս **Ն. Ակինեան**, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 174-75:

3 **Ա. Մնացականյան**, Միջնադարյան սիներերգերի նորահայտ անդրանիկ ժողովածուն եւ հայրենի հարցը. «Էջեր հայ ժողովրդի պատմության եւ բանասիրության», Երեւան, 1971, էջ 96-126. այսուհետեւ՝ Ա. Մնացականյան:

նվիրված է սիրո խնդրին: Այս խմբի բանաստեղծությունների մոտ կեսի հեղինակը Գրիգորիս Աղթամարցին է:

Հակառակ այն վիճաբանությանը, որ արծածվել է նրա բնագրերի վերծանման ընթացքում, հետազոտողները մեծ մասամբ հակված են Գրիգորիսի տաղերը վերագրել հեղինակի երիտասարդության շրջանին: Գիտենք, որ նա կաթողիկոսական աթոռ բարձրացավ 1512 թ., որից հետո մի քանի տարի մնաց Գրիգոր վարդապետի խնամքի տակ: Վերջինիս թելադրանքով երիտասարդ բանաստեղծը գրի է առել քերթվածներ, այդ թվում եւ Ս. Մարինոսի վարքը, որ հորինվել է 1516-ին.

Առ յոտըս երջանիկ ռաբունապետի՝
Գրիգորիոս անուն արթուն հըսկողի,
Քաջ հըռետոր անյաղթ փիլիսոփայի
Եւ երիցս երանեալ մեծ վարժապետի[4]:

Բայց հետո հասկանում ենք, որ սեւ ամպերը խավարեցրել են նրա երջանկության արեւը, եւ մեզ անհայտ ինչ-որ պատճառով վարդապետը հեռացել է իր աշակերտից: Ուստի, նա դիմում է «զանգատ» ժանրին, որով սովորաբար մերժված սիրահարն իր տրտունջն ու վիշտն էր արտահայտում, սիրուհուց գութ ու կարեկցանք էր խնդրում: Այս կերպ Աղթամարցին ցույց է տալիս, թե հոգեկան ինչ ծանր վիճակում է գտնվում ինքը սիրած վարդապետի բացակայությունից ի վեր.

Իմ կեանքս է դառն ու դիժար,
Ողբամ ես միշտ եւ անդադար,
Մեղօք եմ վիրաւորեալ,
Անկեալ ի յախտ չարաչար[5]:

Իսկ երկրորդ աղերսանքը եզրափակում է մի շարք հետաքրքիր համեմատություններով: Ռաբունապետը նմանեցվում է սիրամարգի, վարդի թփի, անուշահոտ խնկի եւ դրախտի ծառի: Սակայն սրանցից ոչ մեկը չի կարող պատկերել վարդապետին ըստ արժանվույն, ուստի եզրակացնում է, թե նա աննման եւ անհամեմատելի է[6]:

Ճիշտ է՝ մեղքերը թվարկելիս բանաստեղծը հիշում է Աստվածածնին: Սակայն Մարիամին հասցեագրած նրա երեք տաղերը (թ. 12, 13, 14) կրում են ավելի ընդհանուր բնույթ եւ, իբրեւ այդպիսիք, չեն կարող հեղինակի ապրումների ծնունդ համարվել:

Այդ միջոցին նրա կյանքի խաղաղությունը խաթարվել էր այլ հոգսերով: Շահ Իսմայիլի մահից հետո խռովություն էր պայթել, եւ 1523-ին թվագրած մի բանաստեղծության մեջ Աղթամարցին հաղորդում է.

Հագարացիք օրինօք թիւր,
Զազգս խանձեն որպէս զհուր[7]:

4 «Գրիգորիս Աղթամարցի XVI դ.», աշխատ. Մ. Ավդալբեգյանի, Երեւան, 1963, էջ 120. այսուհետեւ՝ «Գրիգորիս Աղթամարցի»:
5 «Գրիգորիս Աղթամարցի», էջ 156, տող 25-28:
6 Տե՛ս անդ, էջ 159:
7 Անդ, էջ 142:

Կաթողիկոսարանն անգամ վտանգի մեջ էր, եւ Գրիգորիսը, ինչպես նշում է նկարիչ Հովսեփի վարդապետին ուղղված ձոնում, ստիպված մի քանի տարի շարունակ թափառական կյանք է վարել՝ վանքից վանք տեղափոխվելով[8]:

Կաթողիկոսի գեղագիտական ճաշակի զարգացման եւ կրթության գործում նկատելի է Հովսեփի ավանդը: Սակայն, դատելով գովաբանության խոսքերից՝ կարելի է եզրակացնել, որ Կաթողիկոսը Հովսեփի հետ նույնքան մտերիմ չի եղել, որքան Գրիգոր ռաբունապետի հետ: Հովսեփի բոլոր արժանիքները որոշակի են, առարկայական՝ առանց երեւակայական թռիչքի: Օրինակ՝ նա իմաստուն է, մաքուր հոգի ունի եւ այլն: Կարծես թե բանաստեղծը բովանդակությունը ստորադասել է ձեւին՝ թուղթը մշակելով տնակապ եւ՛ տողերի սկզբում «Գրիգորիսէ» եւ՛ վերջում «Յովսէփին է» ծայրակապեր ստեղծելով, որպեսզի ցուցաբերի քերթողական արվեստի ասպարեզում ձեռք բերած իր վարպետությունը:

Վաղ շրջանի ստեղծագործություններին հաջորդում է տաղերի մի շարք, որոնց կառուցվածքն ու տոնը շոշափելիորեն տարբերվում են նախորդներից: Եւ ամեն մեկում շեշտը դրված է ոչ այդքան ձեւի, որքան լեզվի ճկունության ու պատկերազարդության վրա: Եւ քանի որ նույն պատկերները արագափոխ նրբերանգներով կրկնվում են շարքի բանաստեղծություններում, ուստի արդարացի է դիտել դրանք որպես մեկ միավոր (վերոհիշյալ անդրանիկ ժողովածուի մեջ այդպես էլ երեւում են):

Բոլոր ուսումնասիրողների հիացմունքն ու զարմանքը շարժելով՝ այս քնքուշ բանաստեղծությունները, սակայն բանասիրության նոր շրջանի մեջ տարակարծության առարկա են դարձել: Մեկնաբանության մի ճյուղավորումը պնդում է, որ դրանք գեղեցիկ կնոջ երկրպագության հուզված արտահայտություններ են: Չոպանյանը գրում է, թե «այս բանաստեղծությունները... երգում են կնոջ գեղեցկությունը եւ սիրո զորությունը...»[9]: Իսկ Աբեղյանը լուսաբանում է հետեւյալ ձեւով. «Իր անկեղծ ավյունով... շլացնում է ընթերցողներին, ինչպես եւ Աղթամարցին ինքը շլացած է եղել իր գեղուհու «աստվածային պատկերով»: Իսկույն երեւան է գալիս կրակոտ բնավորությունը, որ տարված է, հափշտակված է մի ճոխ անձից եւ ուզում է նկարել այն»[10]:

Ի տարբերություն այդ աշխարհիկ տեսությանը՝ «chercher la femme» բնաբանով, Ակինյանը հակամետ է Աղթամարցու հիշյալ շարքի մի քանի բանաստեղծություններին կրոնական գունավորում վերագրելու[11]: «Գովեմ զքեզ մարմնով հրեշտակ» սկսվածքով ոտանավորի մասին նա գրում է, թե «բովանդակութիւնը եկեղեցւոյ գովեստն է»[12]: Եւ արդարեւ տեղեր կան, որոնք թերեւս կարելի է այդպես հասկանալ: Սակայն բանաստեղծության այլ կետեր հերքում են այդ հայացքը, ինչպես արդեն ցույց

8 Տե՛ս անդ, էջ 183:

9 **Արշակ Չոպանյան**, *Les trouvères arméniens*, Փարիզ, 1906, էջ 199:

10 **Մանուկ Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, հ. Բ., Բեյրութ, 1969, էջ 411. այսուհետեւ՝ Մ. Աբեղյան:

11 Տե՛ս **Ն. Ակինեան**, Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի. կեանքը եւ քերթուածները, Վիեննա, 1956. այսուհետեւ՝ Ն. Ակինեան:

12 **Ն. Ակինեան**, էջ ՉԷ.:

է տվել Մ. Ավդալբեգյանը: Վերջինս ճիշտ է նկատել, որ «Աղեն» բառը Գրիգորիսը պարզաբանում է «մերս եկեղեցի» ավելացումով[13]: Ուրեմն, քանի որ հեղինակը ոգեկոչում է դրախտի ծառի պտուղը՝ հարկ է ենթադրել, թե նա դիմում է ոչ թե հավատացյալ ժողովրդին, այլ անհատի, որի ինքնությունը քողարկում է «բաբուն» կոչական ձևն օգտագործելով:

Իսկ մնացած պատկերներին անդրադառնալիս Ակինյանը նկատում է, որ որոշ նկարագրություններ առավել բնորոշ են առնական դեմքին: Այդ նկարագրություններից առաջին հերթին պետք է նշել Հին Կտակարանի կերպարները՝ Հովսեփ Քանանացի (տաղ 2), Սեթ եւ Աբիսողոմ (տաղ 22), Միքայել Հրեշտակապետի (տաղ 13, 22), հետո՝ ռազմական տերմինաբանությունը, ինչպես «Ռազմիցս գլուխ զինուոր, զօրանաս ի զօրավարէն» (տաղ 19) եւ որսի թեման՝ «Առիւծ ի շամբի բազկօք զօրաւոր... սարսափէն, դողան երէքդ բոլոր» եւ «քան զքաջ արծիւ բարձրագնաց ես» (տաղ 21):

Եթե սրանք կնոջ թեկնածությունը բացառում են, ապա ուրեմն տաղերն ո՞ւմ են հասցեագրված:

Ակինյանի կարծիքով դրանք ընծայված են տարբեր անձերի: «Դու ես արեգակ» տաղը հասցեագրված է Կաթողիկոսի եղբայրներից մեկին՝ Ամիր Գուրգենին կամ Սմբատին[14], թեեւ թվում է, թե ուղղված է ավելի հեղինակավոր մեկին, որ նմանվում է Մեքայի եւ «ոսկի մէտրասայի»[15], մի արտահայտություն, որ հիշեցնում է թ. 10 տաղից քաղված հետեւյալ տողը՝ «տուն իմաստության շինեալ ի յահեղ հզօրի բազկէ-»[16]: Նմանապես՝ «ես եմ ծարաւեալ, արբո՛ ինձ մի կաթ» տողն[17] ավելի ծնողական, քան թե եղբայրական խնամք է ենթադրում:

«Դու դրախտ եղեմայ» տաղը Ակինյանը համարում է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու նկարագրությունը եւ «Գունդք չար այսոցն ի քէն հալածի» տողը մեկնաբանում է՝ կղզուց քրդերի փախստի արտահայտություն[18]: Սա նույնպես երկբայելի է, քանի որ այդ դեպքում «Դու սքանչելագործ քան զօրաւոր խաչ» տողն[19] անիմաստ կդառնա: Բացի այդ՝ անդրանիկ ժողովածուի խմբագիրն առաջին մասը վերագրել է «գովասանաբար առ ոմն բաղձալիս»[20]: Այսինքն՝ դրանք պետք է ընկալել որպես ցանկալի մարդուն, եւ ոչ առարկային կամ իրադարձությանը նվիրված ներբողներ: Եւ քանի որ նա մոտ է մեր հեղինակին թե՛ ժամանակով եւ թե՛ աշխարհայացքով, նրա խոսքը պետք է լուրջ ընդունել:

«Աստվածանկար պատկեր յօրինեալ ի յարարողէն» (տաղ 19) եւ «Դու ես յԱդինայ դրախտէն» (տաղ 17) սկսվածքով բանաստեղծությունները կապում են Ս. Անտոնի

13 «Գրիգորիս Աղթամարցի», էջ 70:
14 Տե՛ս **Ն. Ակինեան**, էջ ՃԼԸ.:
15 «Գրիգորիս Աղթամարցի», էջ 200:
16 Անդ, էջ 190:
17 Անդ, էջ 202:
18 Տե՛ս **Ն. Ակինեան**, էջ ՃԼԸ.-ՃԼԹ.:
19 Տե՛ս «Գրիգորիս Աղթամարցի», էջ 196:
20 **Ա. Մնացականյան**, էջ 100:

անձի հետ, որն առաջինի մեջ հիշատակվում է հանվանե: Սակայն երկրորդում կա «ի լեռնէն գաս սինէական» տողը[21]: Սինեն մի սրբավայր է, որի հետ չի առնչվել եգիպտացի անվանի ճգնավորը[22]: Միաժամանակ ուշագրավ մի կռվան է տալիս փոքրատառ d գրչագիրը, որը խորագրված է «Տաղ ի Գրիգորիս Աղթամարցոյ ասացեալ ի վերայ վարդապետին իւրոյ»[23]: Աբեղյանը, կարծելով, որ այս քերթվածները կնոջ կերպարն են ոգեկոչում, սրատեսությամբ նկատել է, որ Գրիգորիսն առաջին հայ բանաստեղծն է, որ նկարագրել է գեղուհու ներաշխարհ[24]. սիրային պոեզիայի հետագա ուղին դիտարկելիս համոզվում ենք, որ Աղթամարցին այս առումով անգերազանցելի է:

Ակինյանը գրում է. «Շատ ցանցառ է մեր մատենագրության մեջ առնական դեմքի նկարագրությունը»[25]: Բայց նայած թե ո՞ր ժանրի երկերում: Ուսուցչի գովասանքն ամփոփող ստեղծագործություններում կարելի է տեսնել նմանօրինակ շատ նկարագրություններ: Վերցնենք Գրիգոր Սկեւռացու ձոնն ի պատիվ Ներսես Լամբրոնացու[26]: Երկը բացվում է ժանրի կանոնների բացատրությամբ, որի համաձայն՝ գովասանքները սկսվում են «ի զօրութենէ մարմնոյ, ի բարեչափութենէ հասակի, ի գեղեցկամասնութենէ անդամոց, իսկ որ ի ներքուստ զբարեմասնութեանն սովորեցին նկարագրել զգեղ, այլ իմն ընդ դիմակօք զքաջահաճութիւնն ստորագրեն»[27]: Օրինակ՝ Տաթեւացու մասին Առաքել Սյունեցին գրում է, թե հողեղեն լեզուն չի կարող արտահայտել «ոչ զմարմնոյն գեղեցկութիւնն եւ ոչ զհոգւոյն պայծառութիւնն»[28]:

Ինչպես սիրուհուն նկարագրելիս են աշուղները նրա մարմնի եւ դեմքի բոլոր մասերը հանգամանորեն պատկերում, այդպես ղեկավարվում են եւ ներբողագիրները: Առաքել Սյունեցին հիշատակում է Գրիգոր Տաթեւացու «զգեղեցկայարմար շրթունսն, զերկնակառոյց բազուկն եւ զշնորհաբաշխ աջն, զպնդակազմ անդամսն եւ զանսասանելի ոտսն, զօձահալած գարշապարն եւ զերկնաթռիչ գնացսն» [29]: Գրիգոր Կեսարացին այս կերպ է նկարագրում իր վախճանված վարդապետին՝ Սրապիոնին.

Է~ շունչ իմ եւ հոգի, զիա՞րդ քաշուեցար,
Ընտիր մարմնով սուրբ եւ կոյս... զիա՞րդ լռեցար...
Յայտդ քո լուսով, ունքդ քո կամար, զիա՞րդ անտեսացար...
Շրթունքդ լար, կլափդ փալուն, զիա՞րդ ի հող մածար[30]:

21 «Գրիգորիս Աղթամարցի», էջ 184:

22 «Արեգակնափայլ գեղով լի լուսին» (տաղ 18) սկսվածքով բանաստեղծության մեջ հանդիպում ենք «...զընտանիս ի լեառնէն Սինէ» կիսատողին. տե՛ս «Գրիգորիս Աղթամարցի», էջ 186, տող 15:

23 Տե՛ս անդ, էջ 188:

24 Տե՛ս **Մ. Աբեղյան**, էջ 412:

25 Տե՛ս **Ն. Ակինեան**, էջ ճԼԸ.:

26 Տե՛ս «Գրիգորի Սկեւռացւոյ ներբողեան ի Սուրբն Ներսէս Լամբրոնացի» (Սոփերք հայկականք ԺԵ.), Վենետիկ, 1854. այսուհետեւ՝ «Գրիգորի Սկեւռացւոյ ներբողեան»:

27 Անդ, էջ 9:

28 «Առաքել վարդապետի ասացեալ ներբողեան առ քաջ հռետորն եւ տիեզերալոյս վարդապետն Մեծն Գրիգոր Տաթեւացի աշակերտ Յոհաննու Կախիկ կոչեցելոյ» (Տաթեւացու քարոզգրքի Ամառան հատորում), Կ. Պոլիս, 1741, էջ 718:

29 Անդ, էջ 718:

30 **Ն. Ակինեան**, Մովսէս Գ. Տաթեւացի, Վիեննա, 1936, էջ 415-16:

Հուզմունքով լցված՝ նկարագրության սլացքը մինչեւ իդեալացման աստիճանի է հասնում: Ինչպես վկայում է Գրիգոր Սկեւռացին՝ իբրեւ ավանդույթ մեջբերելով «զպատկերանալն ի կերպարան սկզբնատպին յոր եւ հաստատեցան»[31]: Հիշենք նաեւ Մաղաքիայի խոսքը Գրիգոր Մշեցու մասին. «Շնորհքն աստուածային ի քեզ իջեալ է, աստուածատիպ կերպիդ հոգիս փափագէ»[32]:

Դժբախտաբար, անհնարին է այստեղ բոլոր առանձնահատկությունները քննարկման երթարկել եւ ներկայացնել Գրիգորիսի տաղերի հետ ունեցած ընդհանրությունները: Սակայն նպատակահարմար չէ անդրադառնալ բանաստեղծի այլաբանություններին՝ սիրո հարցն անլուծելի թողնելով: Հարցի կապակցությամբ Ավդալբեգյանը գրում է, որ Աղթամարցու «տաղերի գերակշիռ մասը ավելի իրական սիրո պակասի արտահայտություններ են, սիրո կարոտի, տենչանքների ու երազանքների արտահայտություններ»[33]: Այս եզրակացությանը նա հանգել է Հովնաթան Նաղաշի բաղդատությունից: Ակներեւ է, որ այսպիսի տողերը լիովին բացակայում են Աղթամարցու ստեղծագործություններում.

Շամամներիդ համար դառն եմ,
Թող, որ ձեռս մէջն խառնեմ,
Ինձ ծախեմ՝ էդ բախչէդ առնեմ:
Ջալում, թող ես
Եմիշ քաղեմ,
Մէկ ծիծաղեմ[34]:

Իսկ ընդհակառակը մի շատ սրտառուչ տաղում Հովնաթանը դիմում է Սիմեոն վարդապետին.

Պաղալից ձիթենի՝ ի մէջ Տեառն տան,
Աշտարակ ոսկի՝ եղեալ յանդիման,
Լցեալ գործնական, այլեւ տեսական
Առաքինութեամբ, Սիմէոն վարդապետ ,
Ո՞ւր է քեզ նման երկիրս Հայաստան...
Քո գերեզմանիդ ծառայ Յովնաթան[35]:

Նրա անկեղծ հուզմունքը ցույց է տալիս, որ սիրային բնույթ ունեցող մարդկային հարաբերությունը կարող է եւ սեռային չլինել: Եւ եթե սարկավագ աշուղն այդպես է գրում, ապա ի՞նչ էին զգում վանականները. Շիրակացին վերհիշելով գրում է, թե Տյուքիկոսը «սիրեաց զիս որպէս զորդի իւր եւ պարապեաց յիս յամենայն խորհրդոց իւրոց»[36]:

31 «Գրիգորի Սկեւռացւոյ ներբողեան», էջ 12:

32 **Ն. Ակինեան**, Գովութիւն Գրիգոր վրդ. Մշեցւոյ ի Մաղաքիա իւր աշակերտէ ասացեալ. «Հանդէս Ամսօրեայ», 1952, էջ 582-588:

33 «Գրիգորիս Աղթամարցի», էջ 78:

34 **Ա. Մնացականյան**, Նաղաշ Հովնաթան. Տաղեր, Երեւան, 1983, էջ 48-49:

35 Անդ, էջ 195-199:

36 **Յ. Տաշեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա,

Աղթամարցու երեք հայտնի այլաբանություններին անդրադառնալիս խնդիրն ավելի է բարդանում, որովհետեւ բանաստեղծն իր ասելիքը այնքան վարպետորեն է միահյուսել վարդ ու բլբուլի՝ ընդունված սիրավեպի մեջ, որ առանձին վերցրած, դժվարանում ենք ասել, թե որտեղից պետք է սկսել շերտավորման գործը: Գրականության պատմությունից գիտենք, որ անգամ բանաստեղծին ժամանակակից ընթերցողները կամ լսողները նրա մտադրած իմաստից բավական հեռու են շեղվել, ինչպես պատահել է Կոստանդին Երզնկացու դեպքում[37], էլ ո՞ւր մնաց՝ հետագա բանասերները:

Այդ իսկ պատճառով հարցը քննողներն աշխատել են նյութին մոտենալ պատշաճ զգուշությամբ: Մ. Ավդալբեգյանը գրում է, թե այս բանաստեղծություններն առաջին հայացքից գարնան գալուստն ավետող սիրո ջերմ գովերգություններ են, մինչդեռ դրանց խորքը ամեն մի ընթերցող կարող է իր ցանկացած ձեւով մեկնաբանել[38]: Կ. Կոստանյանցը նախապես կարծել է, թե «Յետ գնալոյ վարդին» սկսվածքով տաղը կնոջ հանդեպ Աղթամարցու ցուցաբերած հավատարմության արտահայտությունն է, ավելացնելով. «Այս ոգեւորության առարկան Գրիգորիս Աղթամարցուն հանդես է բերել իբրեւ կատարյալ աշուղ»[39]: Իսկ այնուհետեւ կարծիքը փոխելով՝ Կոստանյանցը տաղին տվել է ավելի խորհրդանշական մեկնաբանություն. իբր թե սոխակի ողբը կսկծում է գավառի անկումը մահմեդական ծանր լծի տակ: Ընդհահառակը, զարգացնելով այս դրույթը, Ավդալբեգյանը կարծում է, թե վարդը խորհրդանշում է բանաստեղծի կարոտած Աղթամար կղզին: Մինչդեռ Ակինյանն իր հոգեւոր ուղղության հետեւողությամբ եւ սիրահարների երկխոսությունից ելնելով՝ այն եզրակացությանն է հանգում, որ վարդի ու բլբուլի կերպարների տակ թաքնված է մարդու էական տարրերի, այսինքն՝ հոգու եւ մարմնի հակադրությունը:

Իսկ եթե այլաբանությունները միախմբենք մյուս գործերի հետ, չնայած նյութի ներկայացման տարբեր ձեւերին, երեւան են գալիս մեզ արդեն ծանոթ դրվագներ եւ պատկերներ: Նախ վերցնենք «Գարուն երեկ» տաղը: Այստեղ նորից հանդիպում ենք «գանգատի» առանձնացած Գրիգորիսին, որը վանական եղբայրներից խնդրում է բարեխոսել վարդապետի առջեւ: «Գանգատ մ'առնեմ» տաղում նա աղերսել է՝ «եղբարք, առ ձեզ պաղատիմ, թողութիւն խնդրէք վասն իմ»[40]: Իսկ այստեղ նույն տեսակի արգելքից ազատվելու նպատակով ասում է.

Ո՛վ սիրելիք իմ հաւասար,
Թէ գիտէք դեղ՝ արէք ինձ ճար,
Գնամ ի վարդն ի զէնէհար
Եւ ծառայեմ սրտովս յօժար[41]:

1895, էջ 175:

37 Տե՛ս **Արմենուհի Սրապյան**, Կոստանդին Երզնկացի. Տաղեր, Երեւան, 1962, էջ 145:

38 Տե՛ս «Գրիգորիս Աղթամարցի», էջ 82-83:

39 Անդ, էջ 85:

40 Անդ, էջ 156:

41 Անդ, էջ 322:

Ապա հարցնում է.

Ընդ է՞ր արիր զիս անտես,
Որ հանապազ տանջիմ ես[42]:

Իսկ այստեղ համոզում է.

Մի՛ համարեր զիս անարժան,
Կամ սպասաւոր ի քոյդ դրան,
Մի՛ արձակեր զգերիս ունայն[43]:

«Ծաղկունք ասեն» քերթվածը, ընդհակառակը, ավելի անորոշ է այն պատճառով, որ վարդապետին չի ուղղված, այլ գրվել է Աստվածատուր Մեծոփեցու փափագը կատարելու համար, եւ սրանով է բացատրվում տաղի ձեւական արվեստականությունը: Այստեղ եւ որոշում է՝ «զամ իջանեմ վարդենոյն տակ»[44], եւ վարդի նկարագրությունը մի շարք հատկություններով նմանվում է վերը քննարկված երկերին, օրինակ՝

...Չկայ ի քեզ արատ,
Վրայ աշխարհիս կենաս անհատ,
Ի փորձանաց կենաս ի զատ:[45]

Իսկ սիրահարը գտնվում է նույն դրության մեջ.

Յէ՞ր կու մերժէք զիս կարօտով,
Ես կու գովեմ զվարդն ձայնով...
Ի ձեր սըրտիդ դուք սէր չունիք:
Վասն այն զիմ ձայնս չընդունեցիք[46]:

Գալով Աղթամարցու՝ շատերի կողմից ընդունված գուխգործոցին, ասենք, որ այստեղ եւս դրսեւորվել է սիրահարի հողեկան թախծանքը: «Յետ գնալոյ» տաղի սկզբնամասը թեեւ հուսահատական բնույթ ունի, սակայն անսպասելիորեն վերջանում է Աստծո փառաբանությամբ եւ ապագայի ուրախ ակնկալությամբ: Այս տաղը եւս սկսվում է վարդի բացակայությամբ[47], բայց մի կարեւոր տարբերություն կա. վարդը չի գնացել, այլ տարել են նրան այգուց, ինչպես նրա հայտնի տաղում տանում են այգետիրոջը[48]:

Պարզվում է, որ վարդին հեռացրել են: Դրանից հետո սոխակը դիմում է ծաղիկներին, թռչուններին ու վերջը Արարչին՝ ստույգ տեղեկություն ստանալու համար: Այս որոնումն իր զուգահեռն ունի վարդապետին նվիրված ողբի ժանրում: Օրինակ՝

42 Անդ, էջ 156:
43 Անդ, էջ 223:
44 Անդ, էջ 131:
45 Անդ, էջ 139:
46 Անդ, էջ 139, 141:
47 Տե՛ս անդ, էջ 138, տող 94:
48 Տե՛ս անդ, էջ 259:

Հովհան Որոտնեցու մասին Գրիգոր Տաթեւացին գրում է.

Խնդրելով զառաջնորդն լուսոյ... եւ ոչ գտանելով:
Ջխնամող բժիշկն՝ եւ ոչ երեւի...
Ակնածեմ զաչս՝ եւ ոչ տեսանեմ
Յածիմ մտօք՝ եւ ոչ լսէ...
Եթէ հարցից՝ ոչ պատասխանէ
Եւ յարտասուս ոչ խնայէ[49]:

Վարդը, դժբախտաբար, մի անմատչելի վայրում է: Ուստի, սոխակը նրան գրում է նամակ, որի մեջ երեւան են գալիս արդեն օգտագործված բանաձեւեր: Վարդը «պատուական» է, «երանելի»: Դիմելով նրան՝ սոխակը գրում է.

...Անարատ մարմնով ես դու կենդանի...
Ներքին եւ արտաքին չարն ի քէն փախչի[50]:

Հիշենք՝ մի ուրիշ տաղում եւս ասվում է. «Դեւքն սասանին ի քէն»[51]: Աշակերտ-վարդապետ հարաբերությունը նույնիսկ ավելի ակնհայտ է դառնում հետեւյալ երկտողից.

Թէ զիմ զգաստութիւնս հարցանես դու,
Չունիմ խելք ու բասար եւ ոչ իմաստութիւն[52]:

«Զգաստութիւն» բառի հունարեն համարժեքը «νῆψις» կամ «σωφροσυνη» է: Բառը հաճախակի է հանդիպում հոգեվարժական խրատներում՝ իբրեւ անկիրք կատարելության սահման, որին աշակերտն աշխատում է հասնել փորձառու հոգեւոր հոր օգնությամբ:

Տաղի հորինվածքի շարունակությունից պարզվում է, որ վարդը դրախտ է գնացել, մի եզր, որ հակադրված է այգուն. վարդի պատասխանում հետեւյալ խորհուրդն է տրվում.

Թէ կատարեալ իւր սէրն ի հետ վարդին է,
Ասցէք թէ ի դրախտն ըզնա որոնէ[53]:

Արեւագալի ժամանակ սաստիկ որոտ է լսվում, եւ բանաստեղծությունը հասնում է իր գագաթնակետին: Հանկարծ երեւան է գալիս վարդը: Սոխակը փառաբանում է Աստծուն, որովհետեւ «Տեսայ աչօք զվարդն ի մէջ թփերին»[54]:

Սոխակը նրան տեսել է իրականության մեջ: Իսկ ամենօրյա կյանքը դրա համեմատ ընդունում է որպես երազ կամ ցնորք, եւ այս խոստովանությունը լույս է սփռում Աղթամարցու մի ուրիշ առեղծվածի վրա.

Անտի եւ ելն է անմեհի,
Լուծեալ կապիմք անլուծելի[55]:

49 «Նորին Գրիգորի ներբողեան ողբերգաբար ոգեալ ի թաղումն տիեզերալոյս վարդապետին իւրոյ Յոհաննու Որոտնեցւոյ» (Տաթեւացու քարոզգրքի Ամառան հատորում), Կ. Պոլիս, 1741, էջ 714:
50 «Գրիգորիս Աղթամարցի», էջ 233-34:
51 Անդ, էջ 183:
52 Անդ, 234:
53 Անդ, էջ 236:
54 Անդ, էջ 237:
55 Անդ, էջ 181:

Թեպետ մարմինը վերանում է, բայց հավերժական հոգին գոյատեւում է, եւ միայն այդ պայմանում է, որ վարդապետն ու աշակերտն իրապես միանում են:

Այս բանաստեղծությունը բովանդակում է մի փաստ եւս, որ հաստատում է մեր ուրվագծած այն տեսությունը, թե քերթողը դիմել է իր վարդապետին: Այգին, այգեգործը, սիրածի մարմնի որոնումը, արեւագալի տեսիլքը՝ բոլորը նմանվում են Հովհաննու ավետարանի քսաներորդ գլխին, ուր Հարության առավոտյան Քրիստոսը երեւում է Մարիամ Մագդաղենացուն: Աղթամարցու քերթողական արվեստի հետ ծանոթանալուց հետո անհնարին է թվում, թե այդ նմանությունը սոսկ պատահականություն է: Իսկ Քրիստոսի ներկայությունը զգալիս, արդյոք ի՞նչ է բացականչել Մարիամը, ո՞ւմ է իսկապես տեսել: Ահա Ավետարանում գրված է. «Ասէ ցնա Յիսուս. «Մարիամ» եւ նա դարձաւ եւ ասէ ցնա եբրայեցերէն. «Ռաբբունի», որ թարգմանի՝ «վարդապետ»[56]:

56 «Աստուածաշունչ մատեան հին եւ նոր կտակարանաց», Վենետիկ, 1805, էջ 721: